

ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅՆԿԱՆ

«Բայց ես ասեմ ձեզ, սիրեցէք
զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծելոս
ձեր . . . » (Մատթ. Ե. 44) :

Ինչպիսի չքնաղ վարդապետութիւն, եթէ քրիստոնէական կրօնի մէջ շատ թերութիւններ էլ լինէին, այս մէկ պատուէրը բաւական է, որ բոլոր պակասը լրացնէր։ Այս հրահանգը Աստուծոյ արքայութեան յատուկ նշանն է, որ սասանեցնում էր դպիրներին և փարիսեցիներին և լռեցնում անհաւատներին։ Հին օրէնքի ո՞ր պատուիրանն է կարողացել այսչափ կատարելութեան հասնել։ Քրիստոնէական ճշմարիտ աւետարանական լոյսը Ի. դար է որ բաղխում է մարդկանց սրտերի դռները և ինչպէս նախընթաց դարերում նոցա, այսօր ևս մեզ բերում կանգնեցնում է այն անսպառ աղբիւրի առաջ, ուր Պօղոս առաքեալի հետ ի միասին պիտի գոչենք, «Եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս մինչև զլերինս փոփոխելոյ և զսէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»։ (Ա. Կորնթ. ԺԳ. 2)։ Ոչինչ եմ, եթէ մինչև անգամ չզլեղուս մարդկան խօսիցիմ և հրեշտակաց և զսէր ոչ ունիցիմ»։

Այո, պիտի սիրել, սիրել անխտիր ամենքին, ոչ միայն նրանց, որոնք մեզ սիրում են, այլ մինչև անգամ մեզատոգններին, մեզ հակաժողներին։ Սոսկ մարդ չէ խօսողը, սոսկ մարդ չէ պատուէր տուողը և ոչ որ և է սուրբերից մէկը, Ինքը Միածինը՝ մեր Փրկիչն է պատուիրողը, «սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց»։

Ինչ էր ուսուցանում հին օրէնքը. «Սիրեսցես զընկերքս և ատեսցես զթշնամին քո»։ Ահա մի վարդապետութիւն, որ ըստ ամենայնի համապատասխանում էր աշխարհում տիրող ուղղութեանը, ուր կարող էր իրան կատարելութեան գաղաթնակէտին հասնել մարդկային

ամեն մի ցանկութիւնս թերթենք պատմութիւնը, և կտեռնենք, որ մարդ արարածը այդ օրէնքին ծառայելով դադանութեան աստիճանին է հասել կտրուելով միանգամայն իւր Աստուծուց։

Նոր օրէնքի մէջ Փրկիչը լրացնելով օրէնք և մարդարէք ասում է. «Լուարուք ապաքէն զի ասացաւ, սիրեսցես զընկեր քո և ատեսցես զթշնամին քո, այլ ես ասեմ ձեզ, սիրեսցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ՝ որք լիկեն զձեզ և հալածեն»։ (Մատթ. ե. 43—44)։

Քրիստոնէական հաւատն էր, որ ժողովրդին հանեց հին օրէնքի լծի տակից և նրա վարդապետութեան նեղ շրջանից ու լրացրեց օրէնքներն ու մարգարէութիւնները, որովհետեւ «ամենայն օրէնք և մարգարէք ի մի բան կատարին, սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»։ Իսկ Պօղոս առաքեալը հռովմայեցւոց թղթում քրիստոնէական սիրոյ մեծ և վսեմ դադափարը մարդկութեան առաջ դնելով ասում է. «Լրումն օրինաց սէր է»։

Քրիստոնէական հաւատը մեր առաջ պարտք է դնում նմանուել Փրկչին, սիրել ամենքին, սիրել այնպիսի սիրով, որ սահման չունի։ Բայց այստեղ կարելի է երկու կէտ որոշել, նախ՝ թէ պէտք է մեր թշնամիներին սիրել և երկրորդ՝ կարճ էնք ճշմարտապէս ներել նրանց և սիրել, ինչպէս Փրկիչն է պահանջում։

Որքան դժուար է մարդու համար սիրել մէկին, որ իրան ատում է, սիրել նրան, որ ամեն բոլոր իւր գէմ չարիք է նիւթում։ Բայց եթէ վերջը ինչ մտածենք, կհասկանանք թէ որքան մեծ գործ է այդպիսիներին սիրելը։ Փրկիչն ինքն ասում է, եղբայրսիրութիւնից աւելի ինչ լաւ բան կայ աշխարհում։ Բայց միայն մեր բարեկամներին, ազգականներին սիրելը ինչ մեծ բան է կամ ինչ օգուտ ունինք։ Ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն»։ Դրանով ինչ առաւելութիւն կունենանք մաքսաւորներից։ Մինչև անգամ անբան անասունը ճանաչում և սիրում է իւր վերայ խնամք տանող տիրոջը։ Ո՞վ չէ սիրում իւր ծնող-

ներին, ով չէ սիրում իւր ծանօթներին, ազգականներին, Բայց սիրել իւր թշնամուն, սիրել նրան, որ մարդուն ա-
տում է, որ թակարդներ է լարում, որ պատրաստում է
մարդուն հալածելու, գանի, կապանքի ենթարկելու և
մինչև անգամ մահուան պատժի ենթարկելու—ահա մեծ
և գերազանց գործ, որ միայն ճշմարիտ քրիստոնեան կա-
րող է կատարել:

Մտածենք մի փոքր էլ այլ կերպ, եթէ մէկը իբրև
ճշմարիտ հաւատացեալ, Աստուծոյ արքայութեան ժառան-
գորդ է, եթէ նա կարող է թափանցել աւետարանի խորքը,
և հասկանալ նրա վարդապետութեան վսեմ սկզբունքները,
ինչո՞ւ չպիտի մտածէ, որ Աստուած թշնամուն իւր ձեռքին
իբրև գործիք է գործածում, մեր հաւատը փորձելու և իւր
խնամքը մեր անձի վերայ ցոյց տալու և պաշտպանելու
համար, որպէսզի մարդ նայի նրա վերայ, ինչպէս ծովի
ալիքների մէջ ընկած ընկզմման մօտ մի նաւավար, և իւր
անձը փրկելու ձգտի:

Սակայն նայենք մեր շուրջը, ինչ է աշխարհը, և ինչ
շահ ունի նրանից մարդ: Ամեն ինչ ունայնութիւն և ան-
ցողական մի բան է: Փուչ է ամեն բան աշխարհում: Մար-
դու հոգին բարձրացնողն ու վսեմացնողը, նրան նիւթական
աշխարհից կտրողը և երանելիների շարքը դասողը իրան
Աստուծուն նուիրելն է և Փրկչի պատուէրին հետեւելը:
«Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց»:

Ճշմարիտ քրիստոնեան չէ կարող իւր մերձաւորին
չներել և չսիրել, որքան էլ որ թշնամիներին բարիք անելը
տաժանելի մի բան լինի: Նրա առաջ ինչպէս ուղեցոյց,
կանգնած է ինքը Փրկիչը, որ մարդու առաջ ճանապարհ է
գծում: «Այս է պատուէրն իմ, զի սիրեսձիք զմիմեանս,
որպէս և ես սիրեցի զձեզ» (Յովհ. ԺԵ 12): Այն սէրը, որ
ունի մարդ գէպի Քրիստոս, նրան այժ է տալիս հոգւոյ
բոլոր զօրութեամբ ձգտելու իւր սիրոյ մէջ կատարեալ
լինելու և ձգտելու երկնից արքայութիւն ձեռք բերելու
համար: Որովհետև Փրկիչն տաւմ է, որ մարդ երկնքի
արքայութիւնը ձեռք բերելու համար ամեն զրկանք պիտի

քաշի. ամեն արգելք ոտքի տակ տայ: Եւ ով այդ անսա-
տան հաւատով ու սիրով է առաջ գնում նա ևս ժառանգ
կդառնայ երկնքի արքայութեան:

Եթէ մենք չենք կամենում, որ ուրիշը մեզ ատի, մեզ
զրկի կամ հալածի, նոյն բանը մենք ուրիշին չպիտի ցան-
կանանք կամ անենք: Եւ ընդհակառակը այն բոլոր բա-
րիքները, որ մենք կցանկանանք թէ մարդիկ մեզ անեն,
նոյնը և մենք պէտք է նրանց ցանկանանք և անենք. «Ձա-
մենայն զոր միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մար-
դիկ, այնպէս և դուք արարէք նոցա» (Մատթ. Ի 12):
Իսկական հաւատացեալը աշխարհի ոչ մի հալածանքից
երկիւղ չի կրիլ: Քրիստոնէական եկեղեցին քանի՜ քանի՜
նահատակներ չի տուել հեթանոս աշխարհին և քանի՜
գար շարունակ չի հալածուել: Բիւրաւոր նահատակներ
իրանց տանջանքի, խաչի և կրակի մատնեցին միայն Աս-
տուծոյ սիրոյ համար: Այն յաւիտենական Աստուածը որ
միշտ նախատինք և անարգանք է կրում մարդկանցից, և
սակայն դեռ համբերում և դրա փոխարէն բարիք է ա-
նում մարդուն. «Ձի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց
և բարեաց և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւո-
րաց» (Մատթ. Ե 45): Եւ մենք Աստուծոյ գթասրտութիւնը
տեսնելուց յետոյ դեռ չպէտք է ներենք մեր ընկերոջը
իւր յանցանքն և չպէտք է սիրենք: Ինքը Փրկիչը որ մարդ-
կանց մեղքերի թողութեան համար աշխարհ եկաւ, իսկ
աշխարհի խաւարը չկամենալով նրան ճանաչել անարգա-
կան խաչի մահուան դատապարտեց, այնքան տանջանք,
չարչարանք, դան, ծաղր կրելուց յետոյ, ոչ թէ միայն
վրէժ չառաւ իւր թշնամիներից, «որ բամբասեալ և ոչ
փոխարէն բամբասէր, չարչարեալ և ոչ պահէր սպառնա-
լիս». (Ա. պետ. Բ. 23), այլ մինչև անգամ խաչի վերայից
աղօթում էր իւր թշնամիների համար, «Հայր, թող դոցա,
զի ոչ գիտեն՝ զինչ գործեն» (Լուկ. ԻԳ. 34),

Այժմ, երբ այսպէս բացայայտ կերպով Փրկիչը մեր
առաջ է գնում սիրոյ բարձր նշանակութիւնը, էլ ինչ
պատճառ կարող է բերել մարդ դրա գէժ, որ չհասկա-
նալով սիրոյ նշանակութիւնը, չգիտէ ներել ուրիշներին

որ և է տնիրաւութեան կամ նախատինքի համար, և ռիա-
կալութեան թոյն հաւաքելով իւր սրտում յարմար ժա-
մանակ է փնտրում, որ թափի սրա կամ նրա գլխին:
Այո, դժուար է սիրել թշնամիներին, մեղ հալածողներին,
սակայն Աստուծոյ հաւատացեալը պէտք է իմանայ, որ
որքան նա իւր սիրոյ փոխարէն հալածուի, տանջուի մարդ-
կանցից, այնուամենայնիւ իրանից ոչինչ չի պակասիլ,
որովհետեւ Տէր Աստուած է, որ ասում է իրեն սիրելիներ-
բին. «Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է».
(Մատթ. Ժ. 90):

Կենդանի օրինակ է մեր առաջ կանգնած, ինքը Փրո-
կիչն է մեղ առաջնորդողը, ապա ուրեմն, մենք ևս մեր
աչքի առաջ ունենալով նրան հետեւենք նրա օրինակին,
սիրենք մեր թշնամիներին, մեղ անիծողներին, որովհետեւ
նա որ ուզում է Աստուծոյ որդի լինել, նրա շնորհաց
դաւակ լինել, պիտի կատարէ այդ, ներէ ամենքին իրանց
յանցանքը և սիրէ նրանց ինչպէս իւր անձը, լաւ միտ
դնելով Փրկչի այդ խօսքին թէ՛ «Զի եթէ թողուցուք
մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր
երկնաւոր զյանցանս ձեր, ապա թէ ոչ թողուցուք մարդ-
կան զյանցանս նոցա և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյան-
ցանս ձեր» (Մատթ. Զ. 14):

Այժմ պարզ է մարդու համար նրա նպատակը, —
թողնել աշխարհը և նրա տուած պատիւներն ու պարգե-
ները՝ մեծութիւն, փառք, իշխանութիւն, ձգտել դէպի
յաւիտենական սիրոյ աղբիւրը, որ մարդկանց դէպ իրան
է քաշում, նրանց պատուիրում խրախուսում է, որ կա-
տարեալ սիրով սիրեն միմեանց, որովհետեւ կատարեալ
սէր ունենալ, նոյնն է թէ յաւիտենական երջանկութեան
մէջ լինել: Պէտք է ցոյց տալ աշխարհին, որ այն անսպառ
սիրոյ աղբիւրը աշխարհ է եկել և նա մարդուն երկնից ար-
քայութիւն ու երանութիւն է կամենում ընծայել, պա-
հանջելով միայն սէր, գութ դէպի ուրիշները: Ահա այդ
ժամանակ միայն կարող է աւետարտնական լոյսը մարդուն
շրջապատել, տիրել նրա մարմնին և հոգուն, և մարդուն
կատարեալ կեանք պարգեւել, ուր յաւիտենական սէրն է
թագաւորում, և օրտեղից կանչում է մեր Փրկիչը խրա-
խուսելով. «Արդ, եղբրուք կատարեալ, որպէս և Հայրն
ձեր երկնաւոր կատարեալ է»: